№ 16 VII ՏԱՐԻ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1897

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԶՕՐԵԱՆ

(ԿԱՐՕ)

1871 — 1897

—o—

Էլի՛ մի զոհ. . .

Ի՞նչ փոյթ սակայն. . . զո՞հի առջև միթէ պիտի ընկճէք դուք, ընկերներ։ Հայաստանի տարաբախտ մայրերին մէկն էլ աւելացաւ. հեկեկում է նա՝ որդեկորոյս մայրը, եւ Նրա սիրտ կտրատող հառաչանքների հետ ձեր ողբը եւս հնչում է, ընկերներ։ Թանկագին, անմոռաց Արիսի մահն է, որ ողբում էք։

Լայէ՛ք, այդ արցունքները պարծանքով կը լցնեն ձեր սիրտը. այդ մահը նոր կեանք կը տարածէ, նոր սիրտ ու խրախոյս կը ներշնչէ ձեզ։ Հպարտութեամբ դիտում էք դուք, թէ ինչպէս ձեր զինուոր-եղբայրները հայրենիքի պատիւը պաշտպանելով, զէնքը ձեռքին դիւցազնաբար մեռնում են հարազատ հողի գրկում. . .

Ծնել է Կարօն Գողթնի Ցղնա գիւղում (Ագուլիսի մօտ) 1871 թուին։ Ընտանիքի սիրուած ու գուրգուրուած այդ զաւակը դեռ մանուկ հասակում կամքի ուժ էր ցոյց տալիս։ Վճռականութիւնը, յանդգնութիւնն ու անկախութեան հակումը նրա բնորոշ գծերն էին։ Վախն ու փոքրոգութիւնը, վհատութիւնն ու վարանումը օտար էին նրան։ Լիակատար ներդաշնակութիւն ենք տեսնում նրա ամբողջ կեանքի մէջ. խօսքը միշտ գործ էր նրա համար։



ԱՐԻՍՏԱԿԷՍ ԶՕՐԵԱՆ

(ԿԱՐՕ)

Ահա՝ երիտասարդական աշխուժով լի 26 տարեկան Կարօն է պատկերանում ձեր առջև Խանասորի մարտադաշտում, ուր սլանում է նա անդադար մի դիրքից միւսը, ամէնքին քաջալերելով, ամէն տեղ օգնելով նեղն ընկած ընկերներին։

Այո՛, արիւնալից Խանասորում այս աներկիւղ երիտասարդը հազարաւոր քրդական գնդակների տակ մարմնում էր անվնաս, այն միջոցին, երբ ընկերները թախանձագին խնդրում էին նրան թողնել ահաւոր դիրքը։ Երբե՛ք. Կարօյի համար մահացու ամօթ էր նահանջել թշնամու առաջ։

Կռուում է եկել նա եւ պէտք է կռուի մինչեւ աւրինի վերջին կաթիլը։ դիրքը եւ թշնամու քանակութիւնը սարսափելի չէին նրան։

Կռուող ու բողոքող էր Կարօն իր կեանքի ամբողջ ընթացքում։ Դուրան էր լինում նա, թէ պպրոցում, միշտ եւ ամէն տեղ ապակտաբար թոյլերին էր պաշտպան հանդիսանում։

Սիրուած էր նա ընդհանրապէս բոլոր ընկերներից, բայց մանաւանդ տկարներից։ Իսկ աւելի զօրաւորների մէջ նա չարժում էր պատկառանքի եւ յաճախ նոյն իսկ երկիւղի զգացմունք. լռիկ Արիսի հետ կատակ անելը հեշտ չէր։

Մանկութիւնից սեփականութիւն չէր ճանաչում նա։ Ընկերների տրամադրութեան տակ էին լինում նրա մանկական խաղալիքները, դասական պարագաները։ Եւ այդպէս մնաց նա մինչեւ կեանքի վախճանը։

„Ցիշատակ ես ուզում — գրում է ընկերներից մէկը Արիսի եղբորը. չգիտե՞ս միթէ, որ նա սեփականութիւն ունեցող չէր։ Իր չինած մօխիները — ահա՝ քեզ նրանից յիշատակ. . ."

Գիւղական ուսումնարանից Կարօն անցաւ Զաքաթալի ծխական դպրոցը, այդտեղ աւարտելուց յետոյ, փոխադրուեց Թիֆլիսի Նիկողայոսեան դրպրոցը, եւ այստեղից էլ մտաւ նոյն քաղաքի ռէալականը։

Բայց 90 թուականի ցնցումն ու ոգեւորութիւնը եւ այն չրջանները, ուր հայ երիտասարդութիւնը պատրաստւում էր յեղափոխական գործունէութեան — այդ ամէնը առանց հետեւանքի չանցաւ Կարօյի համար։ Հայրենիքի անարգուած պատիւը, ստրուկ եղբօր ազատման միտքը հանգիստ չէին տալիս նրան։ Այն բնաւորութիւններից չէր Կարօն, որոնք սահմանափակւում են միմիայն պլատոնական սիրով հեռւից. — ո՛չ. նա ընդունակ չէր անտարբեր ու սառնարիւն կերպով դիտելու արիւնակից եղբայրների տառապանքները։ Նա չէր համակւած հայրենասիրութեան սոսկ վերացական զգացումով, նա իրական մարդ էր։ Տեսնում էր նա ոտնակոխ եղած մարդկային ամենատարրական իրաւունքները, հայ ընտանիքի բռնարարուած պատիւը, տեսնում էր այդ բոլորը եւ իր բոլոր էութեամբ ձգտում էր բողոքել այդ անիրաւութիւնների դէմ, պաշտպանել անպաշտպան եղբայրակցին։

Անձնական երջանկութիւնը տիրող բռնակալութեան հետ չէին կարող հաշտուել Կարօյի գիտակցութեան մէջ։ Միանգամ ընդմիշտ հրաժարուեց նա իր անհատական "ես"-ից, թողեց ուսումը եւ մտաւ նոր հիմնւած „Կով-

կաս" արհեստանոցը, ուր մէկ ու կէս տարում կատարելագործուեց զինագործութեան մէջ։ Այնուհետեւ շուտով անցաւ X. քաղաքը, մտաւ Դաշնակցութեան նոր հաստատուած զինագործարանը։

Ծանր ու փշոտ էր ճանապարհը, բայց Կարօն հարթեց խոչընդոտները իր աննկուն բնաւորութեան ուժով, եւ ապահովեց արհեստանոցի գոյութիւնը։

1892 խոլէրայի տարին ընկերները սարսափած փախուստ տուին. բայց Կարօն մնաց իր մի ընկերոջ հետ իր գործը շարունակելու. ինքն էլ հիւանդացաւ խոլէրայից, բայց երկաթի կազմուածքը փրկեց նրան։

Խոլէրան ամէն ինչ քայքայեց, արհեստանոցը փակուելու վրայ էր, չկար նիւթական միջոց նրան պահպանելու համար. եւ Կարօն հարկադրուեց իր ընկերոջ հետ պտտել կովկասեան մի քանի քաղաքներ արհեստանոցի համար նիւթեր եւ նպաստ ճարելու։ 1893 թիւը անշարժութեան տարին էր, ընդունելութիւնը սառըն եղաւ ամէն ուրեք։ Ոչ մի տեղից օգնութիւն։ Յուսահատուած՝ հեռացաւ Կարօյից իր ընկերը, եւ նա մենակ մնաց, բա՛յց հաւատարիմ, ինչպէս միշտ, պարտքի զգացմունքին։

„Սկսել ենք մի անգամ, մինչեւ վերջ պիտի տանենք" գրում էր նա հիասթափուած ընկերոջ, վերջին անգամ համոզել փորձելով ու թախանձելով նրան. . . Բայց իզուր. եւ այնուհետեւ գրեթէ ամէն բան ծանրացաւ Արիսի վրայ։ Եւ ամէն բան զոհել աչքին առած, արհամարհելով ամէն վտանգ, նա ոստիկանութեան քթին տակ սկսաւ նպաստներ ու նիւթեր ժողովել, փոխադրել, եւ վերջապէս յաջողեցաւ վերականգնել արհեստանոցը, որ անսայթաք սկսաւ բարգաւաճել այնուհետեւ, Արիսի եւ իր սկսնակ ընկերոջ անդուլ աշխատանքի շնորհիւ։ Նրա արտադրած հրացանները հարիւրաւոր մարդկանց կեանքը փրկեցին, իսկ իր բաժինն էլ եղաւ մի ցուրտ քրդական գնդակ, որ մի ակնթարթում անողորմաբար խլեց Կարօյին իր սիրած ժողովրդից. . .

1894 թւին Կարօն զրկուեց օրինական (լէգալ) կեանքի բարիքներից եւ ստիպուած եղաւ թագնուել։ 1895-ին Մոսկուայում օտարի անցագրով քիչ էր մնում, որ ձերբակալուէր, բայց ճարպիկ կերպով խաբեց ոստիկանին ու խոյս տուաւ։

Հայրենիք դառնալով նա նորից սկսաւ գործը։ 1896 թւի սկիզբներին զբաղուած էր զէնքերի փոխադրութեամբ։ Պարսիկները ձերբակալեցին Կարօյին եւ կամեցան հետեւեալ օրն իսկ յանձնել ռուս կառավարութեան։ Բայց Կարօն հեշտութեամբ անձնատուր չի լինի։ Կէս գիշերին երբ պահապանները ընկղմուած են քնի մէջ, Կարօն մի հարուածով խորտակում է պատուհանի փեղկը եւ դուրս է թռչում հետն առնելով հրացանն ու կապոցը։ Հարայ հրոց է բարձրանում, բայց արդէն ուշ էր, Կարօն հեռացած էր. . .

Նորից երեւաց նա իր սիրած գործի գլխաց, ընկերների շրջանում, նորից ձեռք առաւ մուրճը եւ սկսաւ տենդային գործունէութիւնը։

Բայց այս անգամ այլեւս ազատ չէր գործում Կարօն իր արհեստանոցում, այլ ստորերկրեայ նկուղների մէջ, թագուն մնալու համար ոստիկանութեան սրատես աչքերից։

Գաղտագողի գործունէութիւնը սկսաւ կամաց կամաց ձանձրացնել Կարօյին։ Նա մի քանի անգամ փորձ արաւ անցնել սահմանագլուխը եւ մտնել Օսմ. Հայաստան, բայց ընկերները միշտ յորդորում էին նրան, որ մնայ արհեստանոցում, ինկատ առնելով գործի շահերը եւ նրա մոլեգին բնաւորութիւնը։

Զիջանում էր Կարօն։ Բայց երբ վերջին արշաւանքն էր ծրագրւում, նա անպայման որոշեց մասնակցել, եւ անսասան մնաց իր որոշման մէջ. ո՛չ մի ուժ, ո՛չ մի ընկերական յորդոր չէր կարող այլեւս յետ պահել նրան։

„Մինչեւ օրս ես ուրիշների համար էի հրացան պատրաստում, այժմ ես ինքս պիտի գործածեմ" այսպէս էր առարկում Կարօն։

Եւ նրան վիճակուած էր մեռնել կռւի մէջ։ Այնտեղ, Խանասորի հովտում, փայլեց Կարօյի անընկճելի, հերոսական բնաւորութիւնը։

Այդ մարդը, որ ա՛յնքա՜ն անողորմ էր բռնաւորների նկատմամբ, որ այնքա՜ն մոլեգնութեամբ մարտնչում էր այն ամէնի դէմ, ինչ որ արգելք էր լինում հայրենիքի բարօրութեան, այդ մարդը իր երկաթի կրծքի տակ ամփոփում էր մի վերին աստիճանի քնքուշ ու կանացի սիրտ։

Երբ Խանասորի մէջ աղերքը առաջին անգամ գրոհ էին տալիս դէպի քրդական վրանները, Կարօյի առաջին հոգսը կենդանիներն են լինում. արիւնի եւ արհաւիրքների մէջ նա ինքն է անձամբ մտնում ու ազատում կապուած հորթերին գնդակների անձրեւից։

* * *

Միջին հասակ ունէր Կարօն, ուժեղ, յաղթանդամ կազմուածք։ Երկու սեւ ու խոշոր աչքեր զարդարում էին նրա գունատ դէմքը, լայն ճակատը խելացի կերպարանք էր տալիս նրան, իսկ բարեսիրտ ժպիտը սակաւ էր հեռանում երեսից։

Մանուկ հասակից վարժեցրել էր նա իրեն որսորդական կեանքին, որ նրա ամէնից սիրած զբաղմունքն էր։ Այդ պատճառով Կարօն հեշտութեամբ էր տանում ամէն տեսակ զրկանքներ։ Մենք տեսնում ենք նրան նոյն Խանասորի հովտում ոտով, ծանր բեռը շալակին. բացի ֆէդայու անհրաժեշտ պարագաներից, նա կրում էր նոյնպէս ծանր պայուսակը լի զանազան գործիքներով, որոնց օգնութեամբ շտկում էր Կարօն ընկերների վնասուած հրացանները, եւ փչացնում թշնամու գրաւածները։

Ընկերները քանիցս խնդրում էին նրան ձի նստել. կտրակի մերժում էր Կարօն։ Լինելով հարիւրապետի օգնական, նա նախընտրում էր ոտով քայլել, խրախուսելու համար զինուոր ընկերներին։

Արշաւանքից առաջ, երբ ներկայացուեց ծրագիրը, Կարօն յայտնեց.

„Այո, մենք ձեռնարկում ենք մի շատ վտանգաւոր քայլ. բայց ինչ որ էլ լինի, թէկուզ զոհելու լինենք մեր ամբողջ ուժը, պէտք է դիմանանք, դիմադրենք մինչեւ վերջին րոպէն եւ կատարենք մի նշանաւոր գործ։"

„Ուր որ գնում էր այդ օրը Կարօն, կատաղի կռիւ էր մղւում այնտեղ" ասում են ընկերները։ Աւելի ճիշդ կը լինէր ասել՝ նա գնում էր այնտեղ, ուր կռիւը կատաղի էր։ Առաջինն էր նա վրանների վրայ գրոհ տուողների մէջ, եւ այն վերջիններից, որոնք Արաուլի

սարսռում ոչնչանում էին, երբ բանակը բարձրացած էր արդէն սարը։ Այդ ծանր րոպէների մէջ Սաղաթէլի եւ իր ընկերների փրկութիւնը եւ թշնամու կորստով փախուստը ամենափառաւոր վկայութիւնն են տալիս Կարօյի անօրինակ քաջութեանն ու անձնուիրութեանը։ «Թշնամու եւ իր արիւնը կարմրացրել էր նրա մոխրագոյն չէրքէզքին եւ քրտինքն ու վառօդի ծուխը սեւացրել էին նրա երեսն ու ձեռքերը։ Զափազանց յոգնած էր, որովհետեւ նա թէ՛ հրամայում էր, թէ՛ կռւում եւ թէ՛ իբրեւ զինագործ սարքի էր բերում զինւորների կռւի մէջ փչացած հրացանները...» ասում է մի ականատես։ Երբ հարցնում էին թէ ինչպէս է զգում իր թեւը, որ դեռ առաջին յարձակումին վիրաւորւած էր, «ոչինչ» էր պատասխանում, տեսնելով որ դեռ կարող է շարժել ու գործածել։ Մինչեւ երեկոյ անընդհատ կռւում է նա եւ գիշերը, նահանջի միջոցին մնում է իր դիրքում, վճռած լինելով չհեռանալ, մինչեւ չփախցնէր յարձակողներին։ Իր բնաւորութեան այդ բնորոշ կէտը եղերական մեծութեամբ երեւան է գալիս այդ վայրկեանին, աւա՜ղ, իր կեանքի թելը կտրելու...

Այո՛, պատւով մեռար դու, թանկագին Կարօ, մեռար այն մահով, որը արժանի է միայն քեզ նմաններին։ Դու եղէգ չէիր, որ այս ու այն կողմն է ճկւում քամու ամէն մի թեթեւ հարւածից, դու զօրաւոր կաղնի էիր, որ միայն արմատով է պոկւում։

Դու կատարեցիր կոչը այն էակի, որը քեզնով էր միայն ապրում. մինչեւ վերջին վայրկեանը ականջ էիր դնում դու ծանօթ ու քաղցր խօսքերին. «Կարօ՛, անգին Կարօ... անձդ զոհ դիր Հայրենիքի սուրբ սեղանի վրայ, Բարկէն-Սիւնիի նման լցւիր թշնամու վրէժխնդրութեամբ, կատարի՛ր վերջին կտակս, դրանով միայն կը հանգստանան ոսկորներս գերեզմանի մէջ։ Ես այնքան քաջութիւն ունեցայ, որ կարողացայ կրակի տալ իմ ետեւից բոլոր նաւերը։ Այսուհետեւ դու բոլորովին ազատ ես, գործի՛ր։ Ների՛ր ինձ. յիշիր համբոյրներ...»

Ո՞վ ես դու, ընթերցող. մօզայի ազգասէ՞ր։ Եթէ այո՛ — խղճալի ես դու. դու Կարօներին չես կարող հասկանալ։ Բայց գուցէ դու այլեւս թափառական ես, պանդուխտ, տարագիր, զրկւած քաղցր հողից — մխիթարւի՛ր, Կարօները վրէժխնդիր են քեզ համար։ Իսկ եթէ երիտասարդ թարմ ուժ ես դու, որը դեռ ընդունակ է ստրկութիւնն արհամարհելու եւ ազատութիւնը սիրելու, — դու կերթաս Կարօյի շաւղով։ Ականջ դի՛ր նրա ձայնին. նա վրէ՜ժ է պահանջում...

ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ

Թերեւս ուրիշ մըն ալ ըսած ըլլայ — չեմ գիտեր — բայց արգելք մը չէ ատ որ անգամ մըն ալ կըրկնեմ թէ Թիւրքիան կը նմանի հինցած հագուստի մը, որուն վրայ անընդհատ բացւող ծակերը ստիպւած ես կարկտանով գոցելու։ Հազիւ մէկ մասը նորոգեցիր, տեսնես կարկտանի ծանրութիւնը փութացուց ուրիշ մաշւած կէտի մը բացումը և այսպէս շարունակաբար...

Հելլէնական պատերազմէն հազիւ օձիքն ազատած, հազիւ շունչ կ'առնէր հիւանդ զինւորները ճամբելու և պարապ գանձարանը քիչ մը լեցնելու — և ահա՛ վէրքերը նորէն կը բացւին Թիւրքիոյ համար։ Թէսալիոյ յաղթական (*) բանակին այդչափ մօտ կէտի մը, Ալբանիոյ մէջ խռովութիւնները կը վերսկսին։ Դեռ ասոնց խօսք չհասկցուցած հեռագիրը լուր կը բերէ Տրիպօլսի և շրջակայ գիւղերու մէջ արաբներու առաջ բերած ծանր անկարգութիւններու մասին։ Ճիշդ այդ միջոցին կը լսւի թէ Բասրայի շրջաբնակ բէդուին ցեղերը նորէն ըմբոստացած են կառավարութեան դէմ։ Չմոռնանք որ ասոնք բոլորը մուսուլմաններ են, որոնք ոտք կ'ելլեն խալիֆին դէմ, յունական պարտութեան յաջորդ օրը։

Քիչ ետք, դեռ մօտ օրերս, Մակեդոնիան, Բալքաններու այդ Հայաստանը իր բախտով և դիրքով, որ իր դիւանագէտ զաւակներուն անսալով, բազուկները ծալլած դիտած էր հելլէններու անհաւասար կռիւը իր իսկ պատմական թշնամիին դէմ, այդ Մակեդոնիան է որ կըսկսի խլրտիլ։ Սթափեցնողը այս անգամ ալ Թիւրքն է, իր մոնղոլական խժդժութիւնը, որ այնքան մեծ դեր կատարեց այդ հսկայ շէնքին աստիճանաբար քայքայումին մէջ։ Սօֆիայի Մակեդոնական Բարձրագոյն Կոմիտէն իր վերջին յայտարարութեամբ զ ե ր ծ կը նկատէ այլեւս ինքզինքը ամէն յ ա ն ձ ն ա ռ ու թ ե ն է բուլղար կամ ռուս կառավարութիւններու նկատմամբ, և անողոք կռւի թւականը բացւած կը հռչակէ Թիւրք բռնապետութեան դէմ, ամէն տեղ և ամէն միջոցներով... Եւ արդէն լուրերը կուգան ու կուգան աւետելու զէնքի ու ռումբի մեծ առաքումներ և մօտալուտ պայթիւն մը Մակեդոնիոյ մէջ...

Իսկ անդին Կրէտէն, որուն դատը ջախջախած ըլլալու գոհունակութեամբ ձեռքերը կը շփէր Եըլտըզի ճիւաղը, կը կենայ տակաւին նոյնքան սպառնագին, որքան առաջ։ Ինքնավարութեան բաւական լայն ծրագրի մը հիմնական կէտերն արդէն գծւած հրատարակեցին թերթերը, և այսօր եւրօպացի ընդհանուր նահանգապետի մը ընտրութեան վրայ կը մնայ դժւարութիւնը։ Մինչ մէկ կողմէն ծովակալները դարմանել կը ջանան իրենց ռումբերուն պատճառած վնասները, իրենց զինւորներուն իսկ ձեռքով վերականգնելով այրւած գիւղեր — անդին ապստամբ կրէտացին, առանց զգածւելու այդ բարեսրտութենէն, ականջը տնկած, աչքը չորս բացած, ձեռքը հրացանին կըսպասէ... մէկ պայման դնելով խաղաղացման՝ Թիւրք զօրքին առմիշտ հեռացումը կղզիէն։

Մարդասպանին որկորը հով կուլ տայ թող, Կրէտէն ալ չ'իյնար հոն։

Բայց հանգստանալ վիճակւած չէ այդ Հիւանդ

Մարդու որդնալից մարմնին։ Փտութեան նշանները մարմնի ճիշդ այն մասին վրայ սկսած են երևիլ, որ դեռ առողջ կը կարծուէր, մանաւանդ անոր շուրջը կատարուած խարուսմներէն ետք։ Փարիզի և Լօնդօնի երկու լաւատեղեակ թերթերու թղթակիցներ կը հեռագրեն Պոլսէն թէ „Թիւրքերը կը պատրաստուին ընկճելու քիւրդերը, որոնք խիստ ամբարտաւան դարձած են հայկական ջարդերէն ետք։ Վանի նահանգին երեք գլխաւոր քիւրդ պետեր, որոնք այն կողմերուն սարսափին էին, ձերբակալուած են 4ՐԴ զօրաբանակի հրամանատար Զէքի փաշայի խնդրանքով և Տրապիզօնի մէջ նաւ դրուած են Պոլիս խրկելու։“ Հայկական ջարդերէն ետք, իր տեսակին մէջ երկրորդ դէպքն է ատ քիւրդերու նկատմամբ ձեռք առնուած խստութիւններուն։ Մեր ընթերցողները մոռցած չեն անշուշտ Բաղէշի մատաւնակ մօտկանցի քիւրդերու նորագոյն ապըստամբութիւնը, որ թիւրքերուն զինումովը վերջ գտաւ մայիս ամսուն մէջ։

Որքա՜ն բարութիւն Զէքի փաշայի կողմէն. հայերը հարստահարելուն համար ձերբակալել տուեր է այդ ցեղապետերը. ատ ընողը այն հրէշն է, որ Շաքիրի հետ 95-ի ջարդերը կազմակերպեց։ Եթէ թղթակիցը մեզ հաւատացնել կ'ուզէր այդ այլափոխութիւնը, գոնէ այնքան ալ միամտութիւն չունենար իր հեռագրին կը-ցելու հետևեալ տողերը. „Առաջին անգամն է որ համիտիէները տուրքի կ'ենթարկուին“։ Այս խօսքերն ինքնին կ'օգնեն խնդիրը պարզելու։

Ջարդերէն ետքն էր որ կառավարութեան միտքն ինկաւ քիւրդերէն հարկ պահանջելու, և դեռ յետնեալներն ալ միասին։ Գանձարանը պարապ էր, ինչպէս միշտ, պաշտօնէութիւնը անօթի ու ագահ, իսկ հայ գիւղացին — այդ տզրուկներուն դարևոր զոհը — ինքը հացի կարօտ։ Բնական էր որ այդ անօթի գայլերուն աչքը դարձաւ դէպի կողոպուտով հարստացած քիւրդը։

Մօտկանցիք ապստամբութեամբ պատասխանեցին և չտուին։ Հիմա ալ այդ ցեղապետերը մերժած են, բայց ծուղակն ինկեր են։

Դժուար չէ գուշակել որ հետզհետէ պիտի շեշտի քիւրդերու ուծացումը թիւրքերու նկատմամբ, և մերձեցումը դէպի հայ տարրը։ Նախ այն պարզ պատճառով որ անօթի թիւրք պաշտօնէութիւնը, ապրելու համար, անոր պիտի կառչի իր ճանկերով, երկրորդ՝ քիւրդը, հայէն յափշտակածը սպառելէն ետք, անօթի պիտի մնայ, անընդունակ ըլլալով յարատև աշխատանքի և երրորդ՝ „ակն ընդ ական“-ի օրէնքը, որ սկսած է գործ դնել հայ գիւղացին իր հարստահարիչներուն դէմ, պիտի հարկադրէ քիւրդը անոր կեանքը, պատիւը և սեփականութիւնը յարգելու։

Եւ Եըլտըզի քաղաքականութիւնը, որ հայը իբր ցեղական թշնամի մը ոչնչացնելու կը նկրտէր, իրեն դէմ պիտի գտնէ, Փոքր-Ասիոյ մէջ, երկու թշնամիներ, որոնք թերևս մօտիկ ապագային, նոր դաշնակիցներ ալ գտնան վերջին հարուած մը տալու այդ խարխուլ շէնքին...

Իսկ այդ միջոցին Ծայրագոյն-Արևելքի մէջ ժառանգութեան խնդիր մը ծագելու վրայ է ուրիշ մեռած մարմնի մը՝ Չինաստանի շուրջը։ Հոն ալ կըսկսին շուտով կատաղի մրցումներ, տեղի կ'ունենան դէպքեր, որոնց ճակատագրական ազդեցութիւնը Թիւրքիոյ վրայ դժուար է ճշդել այժմէն, բայց որոնք կրնան անսպասելի անակնկալներ, լուծումի կերպեր, շահերու նոր զուգութիւններ վերապահել Հիւանդ Մարդու ժառանգութիւնն ալ կարգագրելու։

Ո՞վ գիտէ...

ԽԱՆԱՍՕՐԻ ԿՌԻՒԸ

ՆԱՀԱՆՋ

(ՉԻՆԱԻՈՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Նահանջն արդէն վճռուած էր, բայց մեզանից շատերը վերադառնալ չէին ուզում այդքան շուտ. յափշտակուած օրւայ փառաւոր յաղթութիւններով, նրանք երազում էին նոր յարձակումներ։

—„Վալլա, լաւ բան ի, ես ոչ ոքի մտիկ չեմ տայ. քառասուն խոքի կառնեմ, կերթամ Է՛ն չատրքերաց վրայ“, աչքերը վառուած կրկնում էր հարիւրապետ 6-ն. այն 3-ն, որն սկզբում արշաւանքի ծրագրի կատաղի հակառակորդն էր, իսկ այդ ժամին չէր մտածում այլևս ոչ մեր պաշարի սակաւութեան, ոչ թշնամիների հետզհետէ զօրեղանալու մասին...

Սակայն նահանջն անհրաժեշտ էր և նա պէտք է սկսուէր մեր բռնած դիրքից, ուր կուտակւում էին քիչ քիչ կուից քաշուողները։ Ես մինչդեռ առանձին դիրքերում դեռ շարունակւում էին նահանջի ճանապարհը պաշտպանող խմբերի կռիւները, մեր դիրքում ժողովուած տղերքը բացել էին պայուսակները և գաթա ու հալւա ուտելով՝ խօսակցում էին իրար հետ։

Խօսակցութեան առարկան իհարկէ օրւայ դէպքն էր։ Բացատրում էին կուի յաջողութեան պատճառները, — յիշեցին նաև չորեքշաբթի գիշերւայ ընկած լուսաւոր ատղի բարեգուշակութիւնը. — հայհոյում էին այն հայերին, որոնք ուզում են „ծառի տակ պառկիլ բերանը բանալ, որ խնձորն ընկնի մէջը“։ Ոչ ոք նրանցից չի տեսել մի հայ, որի „ձեռքին թֆանկ էլնի ու 10-20 քրդի ջուխաք չտայ“։ Արդար պարծանքով շեշտում էին, որ Շարաֆի հազարաւոր քիւրդ տոհմական թշնամիներն անկարող եղան նրան մի քիչ վնաս հասցնելու, մինչդեռ իրենք, իրենց փոքր թուով, բնաջինջ արին նրա ամբողջ ցեղը։ Արհամարհանքով էին խօսում այդ օրն իրենց դիմացը դուրս եկած հազարաւոր քրդերի անզօր և յուսահատական ջանքերի վրայ. ծաղրում էին նրանց հրացանները ևն...

Դուսմանը և ես մի առանձին հրճուանքով էինք լը-

սում այդ անկեղծ խոսակցութիւնը, բղխած պարզ գիւղական սրտերից։ Ահա մի տարբ, կռիւների մէջ եփւած, գնդակների տարափի տակ ամրացած, թշնամու „ուժը“ տեղն ու տեղը ճանաչած՝ կը ցրւի ժողովրդի մէջ, իր օրինակով, իր ու թանկագին ընկերների արեամբ ձեռք բերած անխախտ համոզումով կը ցնցի նրան, կըսթափեցնի անթիւ հարւածներից շւարած գլուխները, իրեն կը քաշի կռւի ընդունակներին, աւելի լայն կը բանայ յեղափոխական ուղին. . .

Մութն արդէն պատել էր, հինգօրական լուսինը աղօտ լուսաւորում էր շրջակայքը, ցրտից մենք կծկւել էինք մի բոլորակ դիրքի մէջ։

—Տղերքը ուշանում են նկատեցի ես։

—Դէ հազիւ քաշւած լինեն դիրքերից, պատասխանեց Դուման։

Ճիշդ այդ րոպէին լերան մի գագաթից մի գնդակ սուլելով եկաւ և անցաւ ուղիղ մեր գլխի վրայից. յետոյ մի երկրորդը և մի երրորդը։

—Այս ի՞նչ է նշանակում, հարցրի ես։

—Ոչինչ, պատասխանեց Դուման, երևի մեր տղերանց քաշւելուց յետոյ քրդերը բարձրացել են դիրքերը, որտեղից գնդակ են արձակում։

—Բայց իրենց սովորութեան համեմատ պէտք է արդէն քաշւած լինին. քրդերը արևը մայր մտնելուց յետոյ չեն կռւում։

—Այդ ճիշդ է, բայց այս անգամ սիրտները շատ է դաղել։

Այս խոսակցութեան մէջ էինք, երբ երևաց ընդհանուր խմբապետի օգնականը տղերանց և վիրաւորների հետ միասին։

—Տղերքը բոլորը եկա՞ն, հարցրինք մենք անհամբերութեամբ։

—Ո՛չ, պատասխանեց նա, մի փոքրիկ մասը դեռ յետ է։

—Շատ լաւ, դարձաւ Դուման օգնականին, դու խումբդ առ և շուտով անհետացիր մթութեան մէջ, իսկ ես այստեղ կը մնամ և կը դիմաւորեմ քրդերին։

—Ես էլ կը մնամ, պատասխանեցի ես, և երկուսս հրացաններս քաշած՝ մտանք քարերի ետևը։ Իսկ օգնականը տղերանց և վիրաւորներին առնելով՝ շարունակեց իջնել ձորը։

Հետզհետէ վրայ հասան տղերքը և ինքը ընդհանուր խմբապետը։ Մեզ յայտնեցին, որ բոլորս էլ մաս-մաս հեռանանք առանց կրակ անելու, որպէսզի մթութեան մէջ բոլորովին կորցնենք մեր հետքերը։

Կենտրօնական խումբն արդէն բաւական առաջ էր գնացել. նրան յաջողում է ուղիղ ճանապարհով ամենայն ապահովութեամբ տեղ հասնել։ Բայց նոյն վիճակին չարժանացանք մենք՝ յետ մնացածներս, թւով մօտ 20 հոգի։ Ընդհանուր որոշման համաձայն մենք մաս-մաս բաժանւեցինք։ Իւրաքանչիւր մի մասը ամէն տեսակ արկածների է հանդիպել։ Քիչ գաղափար տալու համար պատմենք մեր գլխին եկածը։

Ընդհանուր խմբապետը, Դուման, ես և իմ մի մտիկ ազգականը միասին ճանապարհ ընկանք, բայց արձակւած գնդակների պատճառով ստիպւած էինք իրարից հեռանալ, և մենք շուտով կորցրինք Դումանին, որը յետ էր մնացել մի դէպքի պատճառով, որ պարտք եմ համարում յիշատակել այստեղ։

Բաժանւելով մեզանից, Դուման լսում է մի օգնութեան կոչ և անմիջապէս ճանաչում է իր մտերիմ ընկերոջ ձայնը։ Վազելով, Դուման տեսնում է, որ իր ընկերը վայր է ընկել, անկարող լինելով քայլելը։ Խոկոյն բարձրացնում է նրան, գտնում մի ձի, նստեցնում և սկսում նրա հետ շարունակել ճանապարհը։ Այդ միջոցին մի գնդակ վիրաւորում է Դումանի ձախ թևը, բայց նա ոչ մի ուշադրութիւն չի դարձնում վիրաւոր թևի վրայ և, տեսնելով, որ ձին յոգնածութիւնից չի շարժւում, հանում է իր տրեխները, հագցնում ընկերոջ (վերջինս կորցրած է լինում իրենը) և կամաց-կամաց թշնամիների միջից առաջ ընթանալով, այդ երկուսը ապահով տեղ են հասնում գլխաւոր խմբի ժամանումից միայն 2 օր յետոյ։

Իսկ մենք երկար ժամանակ միասին գնացինք մինչև լերան ստորոտի ձորը, ուր հանդիպեցինք ուրիշ տղերանց էլ։ Այստեղ պէտք է գտնէինք ընդհանուր խմբապետի օգնականին կենտրօնական խմբի հետ. բայց երևի խումբը խոհեմութիւն չէր համարել կանգ առնել և անցել էր. իսկ մեզանից ոչ ոք ճանապարհը չէր ճանաչում և հետևաբար չէր յանդգնում միւսներին առաջնորդ լինելու պատասխանատուութիւնը իր վրայ վերցնել։ Ուստի ոմանք բարձրացան ձորի աջ կողմի թմբի վրայ և իջան միւս կողմը, իսկ մենք և մեզ հետ ուրիշ տղերք բռնեցինք ձորի ճանապարհը։ Այդ գծով քիչ առաջ գնալուց յետոյ մեզ հետ միացած 6 տղերքն էլ բարձրացան ձորի աջ կողմի թումբը և անցան միւս կողմը։ Անցնողները չէին սխալւել. իրենց ճանապարհի վրայ նրանք գտնում են կենտրօնական խումբը։

Մեր ճանապարհը սոսկալի էր, մէկ թզի չափ հարթ տեղ գտնել չէր կարելի։ Երբեմն ստիպւած էինք երկու երեք գաղ բարձրութիւնից ցած թռչել առանց իմանալու, թէ ինչ կայ մեր տակը։ Կարող էք երևակայել, թէ որքա՞ն անտանելի է խոչընդոտներով լի այդպիսի մի ճանապարհ, այն էլ բեռնւած մարդու համար։

Կէս ժամ անցած կը լինէր, ինչ մենք բաժանւել էինք մեր ընկերներից, երբ ձորի աջակողմեան թմբի վերայից լսեցինք հրացանների ձայներ. այդ քրդերն էին։ Փամփուշտները դնելով հրացանների մէջ, մենք երեսի վրայ պառկեցինք գետնի վրայ, աշխատելով չմատնել մեր ներկայութիւնը։ Քրդերը շուտով դադարեցրին հրացանաձգութիւնը, սկսան այս ու այն կողմը պտտել, սուլել և „տղերք“ ձայն տալ։ Նրանք գիտէին, որ մենք այդպէս ենք իրար կանչում. դրանով նրանք ուզում էին խաբել յետ մնացածներին, իմանալ նրանց տեղը։ Մի ամբողջ ժամ պտտելուց յետոյ, քրդերը հեռացան, և մենք բարձրացանք մեր տեղից ու շարունակեցինք գնալ։ Բայց դէպի ո՞ւր. — մեզանից ոչ ոք չգիտէր։ Մենք մի սար էինք ճանաչում, իսկ նա մթութեան մէջ չէր երևում։ Սպասել լուսաբացին սարը տեսնելու համար՝ մահ էր նշանակում, որովհետև լաւ գիտէինք, որ առաւօտը շատ վաղ քրդերը պիտի լցւէին լերան վրայ, փնտռէին յետ մնացածներին և սպանւածներին կողոպտէին։ Պէտք էր անպատճառ գնալ. ուղղութեան համար մեզ օգնեց բևեռային աստղը։ Բռնելով որոշած ուղղութիւնը, մենք ուղիղ գծով առաջ գնացինք։ Մեր ընթացքը շատ էլ խոհեմ չէր. կարող էինք ընկնել քրդերի օրաների մէջ, բայց ի՞նչ արած։

Բարեբախտաբար ոչ ոքի չհանդիպեցինք, բայց յոգ-

նած, հրացանով ու փամփուշտներով բեռնւած, անընդհատ սար բարձրանալ-իջնելով, մենք սաստիկ ծարաւ էինք զգում։ Երբ և իցէ այս դրութեան մէջ եղողը միայն կարող է երևակայել մեր դրութիւնը։ Այս տանջանքների մէջ աւելի քան երեք ժամ գնալուց յետոյ, յանկարծ մի խոտոտ ձորի մէջ լսեցինք բարակ ջրի խոխոջ։ Որքան անտանելի էր մեր ծարաւը, նոյնքան մեծ եղաւ մեր ուրախութիւնը։ Ձեռքով խոտերի մէջ գըտանք աղբիւրի ակը և հարկ չկայ ասելու, որ չխնայեցինք ո՛չ մեզ և ո՛չ աղբիւրին։ Ջրամանն էլ լցնելուց յետոյ ճանապարհ ընկանք։ Բայց աւա՜ղ. մենք փորձառու չէինք, մենք չգիտէինք, որ այդպիսի սոսկալի ծարաւը մի անգամ ջուր խմելով չի անցնում, որ ծարաւը կոտրելու համար անհրաժեշտ է գոնէ մի քառորդ ժամ նստել ջրի մօտ և մի քանի անգամ՝ խմել։ Դժբախտաբար մենք միայն մի անգամ խմեցինք կուշտ և շարունակեցինք մեր ճանապարհը։ Հազիւ քսան րոպէ անցած՝ նորից զգացինք նոյն ծարաւը. իսկ ի՞նչ կարող էր անել փոքրիկ ջրամանը մեզ երեքիս։

Շարունակ բարձրանալով, իջնելով՝ արշալուսին հասանք մի բլրի գագաթ, ուր կային դիրք բռնելու համար քիչ շատ յարմար դիրքեր։ Վճռեցինք մնալ այդ քարերի մէջ, թագնւել մինչև մութն ընկնելը և ապա շարունակել մեր ճանապարհը։

Մի քանի քարեր ևս շարելով, ամրացրինք մեր բռնած դիրքերը և իւրաքանչիւրը մեզանից մէկի մէջ մըտնելով, կծկւեցինք և քնեցինք։ Արևը դեռ նոր էր ծագել, երբ մենք աչքներս բացինք և ի՞նչ տեսնենք. — չնայելով, որ ամբողջ գիշերը շարունակ քայլել ենք, բայց շնորհիւ այն հանգամանքի, որ հարթ տեղով չենք գնացել, այլ սարեր, անդունդներ ենք կտրել, մենք գըտնւում ենք այնքան հեռու Ալատաղի ստորոտից, որ մի ձիաւոր կէս ժամում կարող է մեզ հասնել։

Արևը մի քանի թիզ բարձրացաւ հորիզոնից թէ չէ, մէկ էլ տեսանք, որ քիւրդ ձիաւորները մրջիւնի պէս լցւեցան սարը և սկսան այս ու այն կողմ հրացան արձակել։ Մեր առաջին ենթադրութիւնն այն եղաւ, որ մեր տղերանցից անպատճառ մնացած կը լինեն լերան վրայ, և հիմա կռիւը նորոգւել է նրանց և քրդերի մէջ։ Փամփուշտները հրացանների մէջ դնելով, պատրաստւեցինք մենք էլ, բայց մի քանի րոպէ սրտատրոփ ականջ դնելով, տեսանք որ ոչ մի մօսինի չպատասխանեց մարտինիներին։ Մեր սիրտը հանգստացաւ. նշանակում է, որ տղերանցից ոչ ոք չկայ, այլ քրդերը դիտմամբ կրակ են անում դէպի այն դիրքերը, որտեղ մենք նախորդ օրը պաշտպանւում էինք, որպէսզի նախ քան դիրքերին մօտենալը իմանան, մարդ կայ, թէ ոչ։ Ոչ մի պատասխան չստանալով և համոզւելով, որ մարդ չկայ, սկսան աւելի և աւելի բարձրանալ։ Մեր դրութիւնը վտանգաւոր էր. քրդերը կարող էին ցրիւ գալ տղերանց բռնած ճանապարհով և գտնել մեզ։ Այդ դէպքում մեր կորուստն անխուսափելի կը լինէր, որովհետև մի քանի ժամից աւել դիմադրել չէինք կարող. մեր փամփուշտները շուտով կը սպառւէին։ Բացի այդ, մեր շուրջը 20, 50, 100 քայլի վրայ սփռւած էին մեծ քարեր, որ քրդերը մէկը միւսի ետևից բռնելով, կարող էին առաջ գալ և վերջապէս հասնել մեզ։

Բայց և այնպէս մենք պատրաստ և լարւած սպասում էինք կռւին. ձիաւորները ամբողջ 3 ժամ լերան ամէն կողմը պտտելուց յետոյ, հեռացան մեր աչքից։ Սպասեցինք մինչև կէսօր. նրանք այլևս չերևացին։ Անցաւ մի երեք ժամ էլ, — մենք մեզ բոլորովին ապահով զգացինք, որովհետև մինչև երեկոյ քիչ էր մընացել, և եթէ թշնամին էլ յայտնւէր, մենք վստահ էինք, որ մինչև մութն ընկնելը կարող կը լինենք մեզ պաշտպանել, և յետոյ աներևութանալ խաւարի մէջ։

Այդ ժամանակ մենք սկսանք մտածել մեր ճանապարհի վրայ և, օգտւելով մեր բարձր դիրքից, պարզ կերպով նշան արինք ամէն ձոր, ամէն բլուր, որոնցից պէտք է անցնէինք մեզ ծանօթ լեռը հասնելու համար։ Ժամը հինգը եղաւ թէ ոչ, մեր վստահութիւնը այնքան շատացաւ, որ առանց սպասելու արևի մայր մտնելուն, մենք դուրս եկանք մեր որջերից և իջանք ձորը ջուր գտնելու նպատակով, որովհետև անողոք ծարաւը մեզ տանջել էր ամբողջ օրը։ Գիշերն արդէն մեր ծարաւն անտանելի էր. կարող էք երևակայել, թէ ի՞նչ էր մեր դրութիւնը ամբողջ օրը տաք արևի տակ և շրջապատւած տաքացած լերկ քարերով։

Ձորի մէջ մենք վերջապէս գտանք փրկարար ջուրը, որի կողքից ամբողջ կէս ժամ չհեռացանք։ Այս անգամ աւելի վարպետութեամբ խմեցինք ջրից, այնպէս որ բաւական ժամանակ ծարաւ չէինք զգում։

Կոտրելով մեր դժոխային ծարաւը, մենք կարողացանք աւելի արագ քայլել և դեռ կէս գիշեր չեղած՝ հասանք որոշւած լեռը, որտեղից երեկոյեան չւել էր կենտրոնական խումբը։ Ճանապարհին յիշելու արժանի դէպք չպատահեց մեզ. միայն ես համեմատաբար անսովոր լինելով ոտքով ման գալու, ուժասպառ եղայ. բայց իմ բարեկամ Թ–ն, որ առաջնակարգ քայլող է և ուժեղ կազմւածքով մի տղամարդ, վերցրեց իր վրայ իմ փամփուշտները, որից յետոյ ես կարողացայ աւելի դիւրութեամբ քայլել։ Սարից մինչև մեր երկրորդ իջևանը արդէն ծանօթ լինելով Թ.–ին, մենք նոր դժւարութիւններ չունեցանք և կիւրակի, յուլիս 27-ին, առաւօտեան ժամը 8-ին կենտրոնական խմբի ժամանումից 3 ժամ յետոյ բոլորովին ապահով հասանք մի տեղ, ուր կարող էինք մի երկու օր հանգիստ առնել։ Ամբողջ 6 օր էր, որ մենք ամէն մի 24 ժամւայ ընթացքում ամենաշատը մէկ ժամ հազիւ էինք քնել. ամբողջ 40 ժամ էր, որ ոչ մի բան բերաններս չէինք դրել և այնքա՜ն էլ ճանապարհ էինք անցել, այն էլ անդադար լեռներ բարձրանալով, իջնելով։ Կարող էք երևակայել, թէ որքան քաղցր էր մեզ համար այդ երկու օրւայ հանգիստը, որ առանք երկրորդ իջևանում։

Մեզանից մէկ, երկու օր յետոյ միմեանց ետևից խումբ-խումբ հասան այն բոլոր տղերքը, որոնք մեզ նըման յետ էին մնացել։ Մեր ուրախութիւնը մեծ էր և գրկախառնութիւնը ջերմ, երբ իրար հանդիպում էինք, իւրաքանչիւրը մեզանից միւսին բոլորովին կորած էր համարում։

Այս ընդհանուր ուրախութիւնը նսեմանում էր սակայն խորին հառաչանքով, որ դուրս էր թռչում ամէն մէկի սրտի խորքից, երբ տրւում էին մեր նահատակ ընկերների անմոռանալի անունները։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԷՆ

7 դեկ. 97

Վերջերս տարածուած լուրերը Պարսկաստանի մէջ հայոց կրած նեղութիւններու մասին չափազանցուած են. Սալմաստը քիւրդերու կողմէն ոչ մի հալածանք չը կրեց։ Պատմուած խստութիւնները կառավարութեան կողմէն չէր, այլ մասնաւոր պաշտօնեաներու, ինչպէս այնտեղի գաւառապետը, որ բաւական կաշառք էր կերած։ Բայց քիչ ետք Ատրպատականի ընդհանուր նահանգապետը Թաւրիզ բերել տուաւ զինքը և կաշառք առած դրամները խլելով անկէ, Սալմաստի հայերուն ետ տուաւ, ու դեռ խիստ պատժի ալ ենթարկեց։ Իսկ Խոյի մօտ քիւրդերը յարձակեցան միայն Վառ գիւղի վրայ, անխտիր կոտորելով թէ պարսիկ և թէ հայ։

Վերջին ատեններս պարսից կառավարութիւնն սկսաւ աւելի հաշտ աչքով նայել հայոց վրայ և ատոր իբր ապացոյց կրնայ համարուիլ շահի վերջին հեռագիրը, ուղղուած Ատրպատականի նահանգապետին։ Հեռագրին իմաստը մօտաւորապէս այսպէս էր.

„Վերջին դէպքերու առթիւ Թիւրքիոյ ըրած պահանջները պարզ ցոյց տուին, որ Թիւրք կառավարութիւնը կը ձգտի նոյն դրութիւնն ստեղծել Պարսկաստանի մէջ հայոց համար, ինչ որ Թիւրքիոյ մէջ։ Ուստի կը հրամայեմ, որ ամէն կերպով պաշտպանէք հայերը ու խիստ պատժի ենթարկէք Սալմաստի գաւառապետը, որու յիմարութեան շնորհիւ այնտեղի հայերը վերջերս շատ վշտացած են„։

Թիւրք կառավարութիւնը մեծ պատրաստութիւններ կը տեսնէ պարսկական սահմանագլխին վրայ։ Կը լսուի. թէ վերջապէս մերժած է օր և է հատուցում ընել Պարսկաստանին այն աւերի ու կողոպուտներու համար, որ իր հպատակ քիւրդերը գործած էին Խոյի նահանգին մէջ իրենց վերջին ասպատակութեան ատեն։

Պարսիկ կառավարութեան կողմէն Թիւրքերուն յանձնուած օսմանեան հպատակ քանի մը հայ գաղթականները, որոնք Խանասորի կռւին մասնակցողներ կը կարծուէին, Բաշկալէի մէջ Թիւրք իշխանութիւններու կողմէ ճանչցուած են իբրև անմեղ մարդիկ և ազատ արձակուած, երեք հոգիէ զատ, որոնց վրայ ալ միայն թեթև կասկածներ կը ծանրանան։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Agence Havas-ը կը հեռագրէ դեկտեմբեր 18-ին թէ Մարղասպանին խորհրդականները արգիլած են հրատարակումը Օրմանեանի մէկ շրջաբերականին, որով Էջէքեանի փառքին նախանձորդը „Հլութիւն ու հաւատարմութիւն" կը քարոզէր իր „Հօտ"-ին։ Եթէ Օրման-եանը կը մոռնայ որ հայ ժողովուրդը շատոնց իր „հօտ"-ութեան վիճակէն ելած է եւ անտառէն բերուած ամէն գերան իրեն հովիւ չ'ընդունիր, միւս կողմէն Թիւրքերը այնչափ խելօքցած են հիմա, որ հասկցան թէ այդ տեսակ շրջաբերականներն ունին իրենց ժխտական կողմն ալ, ետեւի երեսը, որ ժողովուրդը ամէնէն առաջ կը կարդայ եւ միտքը կը պահէ։ Նախ՝ „հաւատարիմ եղիր"-ին եւ կայսերական շնորհքներուն առջեւ խոշոր հարցական մը կը դնէ, Արմաշի վանահօր տեսութիւններուն հանդէպ՝ իրականութիւնը գծելով։ Երկրորդ՝ երբ այդպիսի շրջաբերական մը կ'ուղղուի ժողովրդին, լռելեայն ընդունիլ է թէ այդ ամբողջ ազգն է դժգոհ ու ապստամբը, թէ չէ ի՞նչ կարեւորութիւն պիտի ունենային քանի մը „այծերը" այդ հոծ ու հաւատարիմ „հօտին" մէջ։

Բայց Մարղասպանը գործը լաւ գիտէ հիմա. մինչ մէկ ձեռքով շրջաբերականը կ'առնէ գրպանը կը դնէ, իբր գրաւական մը պատրիարքարանի հաւատարմական զգացումներուն, միւս ձեռքով՝ գաղտնապէս ամենալիրբ հրահանգներ կուտայ վալիներուն, զոհերու ձայնը տեղնուտեղը խեղդելու համար։ Մարղասպանին անձնական քարտուղարը Թահսին պէյ, բոլոր նահանգապետներուն ուղղած է հետեւեալ գաղտնի շրջաբերականը, որուն մէկ օրինակը միսիոնարներու միջոցաւ ձեռք անցնելով, հրապարակ նետած է Հայր Փ. Տարմըթան, Եւրոպայի զայրոյթը (°) գրգռելու համար։

1-13 սեպտեմբեր 97.

„Իմացուեցաւ թէ հիւպատոսներուն հրամաններ տրուած են քննութեան մը ձեռնարկելու Անատոլիի մէջ գտնուող հայոց թիւին, անոնց թշուառացած զաւակներուն, իսլամութեան դարձածներուն, միւսիւլմաններու տներու մէջ պահուած կիներուն, հայոց եւ իրենց ընտանիքներու աղքատ կացութեան եւ դատապարտուածներու վիճակին վրայ։ Արդ, որովհետեւ ամէնուն յայտնի է թէ հայերն իրենք են եղած խռովութիւններու կազմակերպողներն ու գրգռիչները, եւ քանի որ անոնց յարձակումը նախատեսուած չէր, աներկբայ է որ միւսիւլման կիներ ու տղաներ անոնց ձեռքը մնացած են։ Միւս կողմէն նոյնքան ստոյգ է որ ո՛չ մէկ հայ կին կամ երեխայ չէին կարող միւսիւլմաններու քովը մնալ։

„Այս ամէնուն հակառակ, կը ջանան անդադար քննութիւններ կատարել՝ հայերը իբր զոհ ցոյց տալու համար. եւ որովհետեւ այդ փորձերը վնասաբեր են կայսերական կառավարութեան, հետեւաբար, հէնց որ իմանաք թէ հիւպատոսները այդպէս կը գործեն, այդ սուտերու եւ զրպարտութիւններու ազդեցութիւնը խափանելու համար, որոնք կրնան բազմաթիւ վընասներ առթել կառավարութեան, դուք պարտաւոր էք հարկաւոր միջոցները ձեռք առնել այդ բանը խանգարելու անոնց, եւ նոյն ատեն հաղորդել մեզ, ինչպէս որ կը պահանջէ անձնուիրութեան եւ հաւատարմութեան պարտքը։

„Եթէ այլապէս վարուիք, պատասխանատու պիտի ըլլաք ու նկատուիք իբր դաւաճան մը կառավարութեան եւ իսլամին։

„Հաւասարապէս անհրաժեշտ է որ դուք ակներեւ ցոյց տաք հայերու բոլոր այն աւերիչ ու գրգռիչ գործերը որոնք պիտի ծագին հիւպատոսներու քննութենէն եւ դատական կերպերէն։

„Ն. Կ. Վ. սուլթանի հրամանովն է որ պալատի առաջին քարտուղարը իր 13 սեպ. 1897 հեռագրով ձեզ կ'իմացնէ այդ ուղղութեամբ ամէն հարկաւոր խնամք գործ դնելու պարտքը։ Հետեւաբար, կայսերական իրատէին համաձայն, դուք պարտաւոր էք այդ նպատակին համար գործ դնել կատարեալ փութկոտութիւն եւ բոլոր հարկաւոր միջոցները։"

Այս հեռագիր-շրջաբերականին ցինիկեան լրբութիւնը մեկնաբանութեան չի կարօտիր. մեր ընթերցողներուն ուշը կը հրաւիրենք միայն այն կէտին վրայ, ուր շեշտուած է հիւպատոսական քննութիւններէն կամ հարցափորձէն ծագելիք հետեւանքները. պարզ լեզուով նոր ջարդի սպառնալիք է ատ, ուրիշ ոչինչ։

Ի՞նչ կը խորհի այդ միջոցին Օրմանեանը։ Բողոքե՞ց պաշտօնապէս այդ շրջաբերականին դէմ, բացատրութիւններ պահանջե՞ց — չենք գիտեր, բայց առանց գիտնալու ալ կարելի է հաւատալ թէ չլսելու տուաւ։ Բայց փառատենչիկ պատրիարքուկը, որ պատմութեան անունով կը խօսի, լաւ կ'ընէր եթէ յիշէր թէ ի՞նչ ըրաւ իր նախորդը՝ Երուսաղէմի աքսորեալը Իզմիրլեան, յարանման պարագայի մը մէջ։ 95-ի ջարդերէն ետքն ալ Մարղասպանը նոյն լիրբ խաղը խաղաց. յանձնաժողով մը հաստատել տուաւ խռովութիւններու միջոցին կործանուած կամ այրուած (°) մզկիթները վերանորոգելու համար։ Իզմիրլեանը այդ տեսակ կատակներ չէր սիրէր. իսկոյն բողոք մը խրկեց Բ. Դուռը, ըսելով թէ ո՛չ մէկ մզկիթ քանդուած կամ այրուած էր, բացի մէկէ մը, եւ ան ալ ճարակ եղած էր Թիւրքերու ձեռքով հայոց թաղը ձգած հրդեհին։ „Ատոր հակառակ հայ եկեղեցիները, դպրոցներն ու թաղերն են որ կրակի տրուեցան," կը յիշէր Իզմիրլեան եւ անոնց վերաշինութիւնը կը պահանջէր, իր կողմէն խօսք տալով պատրիարքարանի միջոցներով վերականգնել մզկիթները, եթէ երբեք հայու մը ձեռքը քար մը քակած ըլլար անոնցմէ։

Այդ բողոքագիրը Իզմիրլեան միեւնոյն ատեն դեսպաններուն ալ հաղորդեց։

Նոյնը պարտական էր ընել եւ Օրմանեան այս պարագային մէջ, ստիպելով կառավարութիւնը բացատրութիւններ տալու այդ հեռագրի մասին եւ անգամ մը առմիշտ պաշտօնապէս պատռելու համար Եըլտըզի գազաններուն անհունապէս վրդովիչ ու անօրինակ կերպով լրբենի դիմակը։

Արդեօք այդպիսի անակնկալի մը նախախնամբե՞ն է որ կը

Հաղորդէ մեզ Times-ի վերջին լուրը. իր Պոլսի թղթակցին ըսելով, պատրիարքը մօտերս Մարդասպանին պիտի ներկայացնէ յիշատակագիր մը հայոց կացութեան մասին: Եթէ ճիշդ է, Օրմանեանի այդ քայլը իր միակ խելացի եւ հետեւական գործը պիտի ըլլայ մինչեւ հիմա իր ըրածներուն -եթէ քան մը ըրաւ- եւ մանաւանդ ..... խօսածներուն, քան մը որ անուրանալի է: Եշէքեանի ստրկամոլ եւ Իզմիրլեանի հպարտ ու օրինական քաղաքականութեան միջեւ, եթէ նոր մը կը յաւակնէր ստեղծել՝ հաշտութեան ու զիջողութեան (˜), անկեղծութիւն պէտք էր պահանջէր ամէնէն առաջ: Աստը ճիշդ հակառակը կը պատկերացնէ մեզ Թահսինի շրջաբերականը եւ բոլոր այն խուլ հալածանքը որ անընդհատ կը շարունակուի դեռ հայաբնակ գաւառներու եւ Հայաստանի մէջ: Թող ընէ ուրեմն այդ հարցը Եըլտըզի լակոտներուն առջեւ, եւ ապա իջնէ այն գահէն ուր նստողը Խրիմեանի մը սիրտը, Ներսէսի մը ճկունութիւնը կ'ւ մանաւանդ Իզմիրլեանի մը կամքն ունենալու է:

Եթէ Օրմանեանը Կեսարին նմանելով „Կամ պատրիարք, կամ ոչինչ“ գոռալու եւ իրագործելու ձգտելու խելքն ու արիութիւնը չունի, թող գիտնայ որ Թիւրքիացի հայն ալ պատրիարք մը կ'ուզէ տեսնել Գում-Գաբուի մէջ եւ ո՛չ թէ խ ր տ ի լ ա կ մը:

„Ականջ ունեցողը թող լսէ:“

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

(ՔԱՂՈՒԱԾ ՄԱԿԵԴ. ԲԱՐՁՐ. ԿՕՄԻՏԷԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻՑ)

Մի աւազակային խումբ, դեկ. 13-ի գիշերուայ ժամը 9-ին մտնում է Վինիցա գիւղը եւ բուն աւազակային նպատակով սպանում գիւղական բուլգար պահապանին եւ Քէազիմ բէյ անունով մի տաճկի: Տաճիկ կառավարութիւնը աւազակներին հալածելու փոխանակ, շրջապատում է ամբողջ գիւղը եւ 6 օր անդադար տանջում է բոլոր բուլգար գիւղացիներին 15 տարեկանից սկսած մինչեւ 70: Երկար ու սոսկալի տանջանքներից յետոյ գիւղական տանուտէրը յայտնում է, որ իրենց գիւղում հրացաններ կան: Կառավարութիւնը հէնց այդ էր ուզում:

Սրանից յետոյ գործը ընդունում է իր սովորական ընթացքը: Խժդժութիւնները, կողոպուտները աւելանում են. ձերբակալութիւնները եւ ամէն տեսակ տանջանքներ ստանում են մեծ կերպարանք: Աւազակները չհալածւեցան եւ ի՞նչ կարիք կար, երբ տաճիկ կառավարութիւնը յարմար առիթ ունի անպատուելու, սպանելու եւ սարսափեցնելու համբերատար քրիստոնեայ ազգաբնակութիւնը: Խստութիւններէ սարսափանի մասին գաղափար տալու համար միայն այն է յայտնի, որ հնայած սահմանապահ զօրքերի խիստ հսկողութեան, Կօչանսկօ, Մալեշեւսկօ, Պիանէչկօ գաւառներից մինչեւ դեկտեմբերի 3-ը 250 հոգի են անցել Բուլգարիա, ամէն դասակարգի եւ հասակի, որոնց մեծամասնութիւնը դեռ իրենց մարմնի վրայ կրում է տաճկական խժդժութիւնների հետքերը:

Վինիցա գիւղում, 70-80 մարդ շղթաներով ձեռքերից կամ ոտքերից կապած, կախեցին առաստաղից. այդ դրութեան մէջ մնացել են մի քանի ժամեր: Մի ոմն, Զախարի Չէկօվ անունով, այդ դրութեան մէջ ամբողջ երեք օր մնալուց յետոյ մեռաւ:

Այսպէս է սկսւում սուլթանի խոստացած բարենորոգումների գործադրութիւնը: Սա ռուսական դիւանագիտութեան խորհուրդների հետեւանքն է: Սա այն վարձատրութիւնն է, որ տըրւում է բուլգարներին հանգիստ մնալու համար տաճկական պատերազմի տագնապալից օրերին:

Սուլթանը խոստանում, Ռուսաստանը [illegible] է տալիս, բուլգարական կառավարութիւնը համակերպում է եւ Տաճկաստանի քրիստոնեայ ազգաբնակութիւնը փոխանակ շարունակելու 95 թ.-ի կռիւը, հողի տակ թաղեց իր հրացանը եւ սկսաւ մշակել հողը երջանիկ օրերի յուսով:

Թէ ինչ է մտածում Ռուսաստանը, թէ ինչ կարող է մտածել ազատ Բուլգարիայի կառավարութիւնը, մենք չգիտենք: Բայց այս բոլորից յետոյ մենք շատ լաւ գիտենք, որ սուլթանը Մակեդոնիան երկրորդ Հայաստան է ուզում դարձնել, եւ թէ մեզ՝ մակեդոնացի փախստականներիս համար այս օրւանից սկսած բոլոր հովանաւորիչ խորհուրդները, բոլոր ազգասիրական խաղերը եւ եղբայրական խոստումները պարապ են թըւում: Եւ մեր ծրագիրը, ազատ որ եւ է պայմաններից, կառանձնանայ եւ բոլորի ձայնը կը լինի մարտի ձայն ամէն տեղ, ամէն միջոցներով տաճիկ բռնակալութեան դէմ...

ՆԱՀԱՏԱԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նոյ. 28ին հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ կատարուեր է Պոսթընի մէջ, Խանասորի նահատակներու յիշատակին: Նոյն իրիկուն, Դաշնակցութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած հրապարակային ժողովին ներկայ գտնուած է երկսեռ խուռն բազմութիւն մը, անխտիր բոլոր կուսակցութիւններէ:

Կուսակցական գծուծ շահերու այդ հրաժարումը նահատակ զինուորներու յիշատակին առջեւ, լաւագոյն գրաւականը պէտք է համարել յեղափոխական գաղափարներու կրած բարեշրջումին:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՍ ստացած է.

Սօթինգհամէն՝ Ս. Ա. Պ. 5 շիլլին, Նիւ-Եօրքէն՝ Կ. Գ. Փափազեան 2 դոլար, Նէօշաթէլէն՝ Մ. Տօքթօրեան 10 ֆրանք, Հէմլինտէն (Հս. Ամերիկա) Կոմիտէի միջոցաւ 5 դոլար, Անվերսէն՝ Հայրենասէր եղբայրներ 5 ֆրանք:

ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԻ Կոմիտէն՝

Մուշեղ 50 ռուբլի, Ծառ 30 ռ., Վարդ, Սղոց եւ Գրիշ 20-ական ռ., Նիկողոս, Հացեր եւ Ժլատ 10-ական ռ., Ծերունի, Զուռ, Շաքար, Արաքս, Կանգուն եւ Սալբի 5-ական ռ., Նոր-Նախիջեւանցի հայ, Լիմոն, Ջգուշ, Խնձոր եւ Այտնով 3-ական ռ., Խաղող, Ճանապարհորդ, Աստապատ եւ Արարատ 2-ական ռուբլի:

ՈՍԿԵՀԱՆՔԻ Կոմիտէն՝

Ռուբինեան խ. 22 դահեկան, Որսորդաց խ. 18 դհ., Որոտում խ. 15 դհ., Անդրանիկ խ. 10 դհ., Ահեկեան Յ. եղբարք 19 դհ., Կանգուն 15 դհ., Բոլ 10 դհ., Նօշրօթ՝ Ալք եւ Խալիկ՝ Վրաժշապուհ եւ Վրէժխնդիր 40 դհ.'

Ածխահանքէն՝ Վրէժ եւ Նիզակ 20-ական դհ., Առիւծ 15 դհ., Ժիրայր եւ Մուշեղ 10-ական դհ., Արթուն, Հեզ Պարոյր եւ Վարդ 5-ական դհ.:

ԳԷՅԱՓԻ Կոմիտէն՝

Դաղտնապահ խ. (ամսավճարներ յունիս -- 1 հոկ.) 20 լեւ, Վասպուրական եւ Պանդուխտ խ.-եր 13 լեւ 50 ս., Նոր աշխարհ խ. 24 լեւ, Արարատ խ. 20 լեւ, Վ. Բ., Լ. Ս. եւ Խ. Գ. 6-ական լեւ, Ա. Ն. եւ Թ. Կ. 3-ական լեւ, Տ. Ա. Մինասեան 5 եւս 2 լեւ, Յովնան Յ. 2 լեւ 50 ս., Յ. Փ. 12 լեւ, Գրիգոր Անուշեան Լ. քաղաքէն երկու անգամ 7 լեւ, Վասպուրական խ. 8 լեւ, Յ. Ս. Է. 9 լեւ, Մամիկոնեան (Լ. քաղաք) 9 լեւ, Գաղտնապահ խ. (հոկ. ամսավճար) 16 լեւ, Լ. Վ. Խ. Յ. 8. լեւ, Մ. Կուս. 1 լեւ, Անցեալ տարուան ներկայացման հասոյթ 146 լեւ 20 ս.:

Հետեւեալ անձերէն վեցամսեայ անդամավճար՝ թիւ 1000000-ը 6 ֆրանք, Ազնիւ 4 ֆր. 80 սանթիմ, Վօյնիկ 6 ֆր., Սուր 6 ֆր., Յաւնաւոր 3 ֆր., Երկաթ 4 ֆր. 80 սան., Քիւրդ 4 ֆր. 80 սան., Գող 6 ֆր., Իշխան 4 ֆր. 80 սան., Գնդակ 6 ֆր., Աճէմ 4 ֆր 80 սան., Շքեղ 3 ֆր., Վահան 4 ֆր 80 սան., Սուրճ 5 ֆր 50 սան.:

Նոյն կոմիտէն ստացեր է Ս... քաղաքի մասնաճիւղէն 70 եւ 30 ս.:

ԳԱՀԻՐԷԻ Կոմիտէն՝

Յունիս եւ յուլիս ամիսներու մուտք. Առիւծի թագաչէն 100 ֆրանք, Զօրէն 40 ֆր., Գեղամ 1 եւս 1 անգլիական ոսկի եւս 20 դահեկան, Եւտօքսի 20 դհ., Վահագն խ. 20 եւս 20 դհ., X. 20 դհ., Հայկ Ն. Սուրէն 10 եւս 10 եւս 10 դհ., Պէգիրճի 10 եւս 10 դհ., Կ. Պ., Ս. Ք., Վահան, Մանաս, Հրաչ, Արտէմ, Ասաս, Գուրգէն, Արտաշ Հայկազ, Ա. Փ., Ս. Բ., Նազար եւ Արամազդ 10-ական դհ., Երմենակ Պալճեան, Սգաւոր, Ն, Պ., Ազուլիս, Զարնող, Փիլօմէն, Պ. Երուանդ, Գառնիկ, Պ, Յակոբեան, Գրգռիչ, Ս. Մեծիքօվ, Ասպետ, Ս. Տրապիզօնցի, Ուրագ, Պ. Ասեղ, Կ. Մար Ժիրայր, Լեւոն եւ Արայ 5-ական դհ., Թորոս Ռուբէն 5 եւս 5 դհ., Ասլիւ 15 10 եւս 10 դհ.:

Հոկտ. եւ նոյ. ամիսներու մուտք. Արամազդ, Կայծակ, Հայկազ 20-ական դահեկան, Գեղամ, 20 եւ 20 դհ., Սուրէնի միջոցաւ 20 դհ., Արսլան, Մուրճ, Հրաչ, Վահան, Մարգարէ, Օ. Օ., Մինաս Մանուկեան եւ Գարեգին 10-ական դհ., Ճօթ 10 եւս 10 դհ., Զարուհի 10 եւս 10 դահեկան:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)